



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

6 դեկտեմբերի 2016 թվականի

թիվ 161

քաղ. Մոսկվա

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների
տեղեկատվական ֆոնդերում ներառված չափումների
միասնականության ապահովման ոլորտում տեղեկությունների
փոխադարձ տրամադրման կարգի հաստատման մասին**

«Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն իրականացնելու մասին» արձանագրության 3-րդ կետի 3-րդ ենթակետի եւ 9-րդ կետի 4-րդ ենթակետի իրագործման նպատակներով («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 17-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տեղեկատվական ֆոնդերում ներառված չափումների միասնականության ապահովման ոլորտում տեղեկությունների փոխադարձ տրամադրման կարգը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն ոչ շուտ, քան սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո՝ բացառությամբ սույն Որոշմամբ հաստատված Կարգի 5-րդ կետի «գ» ենթակետի:

Սույն Որոշմամբ հաստատված Կարգի 5-րդ կետի «գ» ենթակետն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող տեխնոլոգիական այն փաստաթղթերն ուժի մեջ մտնելու օրվանից, որոնք կանոնակարգում են տեղեկատվական փոխգործակցությունը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տեղեկատվական ֆոնդերում ներառված՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում տեղեկությունների փոխանակման ապահովման ընդհանուր գործընթացի Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

Տ. Սարգսյան

ՀԱՍՏՍՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի դեկտեմբերի 6-ի
թիվ 161 որոշմամբ

ԿԱՐԳ

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների
տեղեկատվական ֆոնդերում ներառված չափումների
միասնականության ապահովման ոլորտում տեղեկությունների
փոխադարձ տրամադրման**

1. Սույն Կարգը մշակված է «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն իրականացնելու մասին» արձանագրության 3-րդ կետի 3-րդ ենթակետին եւ 9-րդ կետի 4-րդ ենթակետին («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) համապատասխան, սահմանում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տեղեկատվական ֆոնդերում ներառված՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում տեղեկությունների փոխադարձ տրամադրման միջոցները (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ) եւ ներառում է սույն Կարգի շրջանակներում տրամադրվող՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում տեղեկությունների ցանկը:

2. Սույն Կարգի նպատակների համար օգտագործվում է «տեղեկություններ» հասկացությունը, որը նշանակում է տվյալների էլեկտրոնային բազաներից տեղեկատվություն եւ էլեկտրոնային ձևով փաստաթղթեր, որոնք ներառված են չափումների միասնականության ապահովման ոլորտում անդամ պետությունների տեղեկատվական ֆոնդերում:

3. Սույն Կարգի 12-րդ կետում նախատեսված տեղեկությունների փոխադարձ տրամադրման կազմակերպումն իրականացվում է չափումների միասնականության ապահովման ոլորտում անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից (այսուհետ՝ անդամ պետությունների լիազորված մարմիններ):

4. Տեղեկությունների տրամադրումն իրականացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան տեղեկությունների տրամադրման համար լիազորված կազմակերպությունների կողմից (այսուհետ՝ լիազորված կազմակերպություններ):

5. Տեղեկությունների տրամադրումն իրականացվում է հետևյալ եղանակներով՝

ա) գրավոր՝ թղթային կրիչով.

բ) էլեկտրոնային ձևով՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում (այսուհետ՝ Ինտերնետ ցանց) անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական պորտալների միջոցների օգտագործմամբ: Նշված տեղեկատվական պորտալների էլեկտրոնային հասցեների մասին տեղեկատվությունը տեղադրվում է Ինտերնետ ցանցում Միության պաշտոնական կայքում.

գ) էլեկտրոնային ձևով՝ համապատասխան ընդհանուր գործընթացի իրագործման շրջանակներում Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցների օգտագործմամբ: Ընդհանուր գործընթացի իրագործմանը ներկայացվող պահանջները որոշվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով):

6. Տեղեկությունների տրամադրումն իրականացվում է ըստ անդամ պետությունների լիազորված մարմինների, Հանձնաժողովի, լիազորված կազմակերպությունների, իրավաբանական անձանց, որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց եւ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ դիմումատուներ) հարցման: Հարցումը ձեւավորվում է կախված տեղեկությունների տրամադրման միջոցից եւ ներառում է՝

ա) տեղեկություններ դիմումատուի մասին. դիմումատուի անվանումը կամ ազգանունը, անունն ու հայրանունը (առկայության դեպքում)՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի եւ ֆիզիկական անձի համար.

բ) դիմումատուի ղեկավարի կամ ղեկավարի լիազոր ներկայացուցչի ստորագրությունը կամ դիմումատուի ստորագրությունը՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի եւ ֆիզիկական անձի համար.

գ) գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական անձի հասցեն) անդամ պետությունների լիազորված մարմինների, Հանձնաժողովի, լիազորված կազմակերպությունների, իրավաբանական անձանց համար կամ բնակության վայրը՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի եւ ֆիզիկական անձի համար, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստի հասցեն.

դ) հարցման առարկան եւ նպատակը.

ե) հարցման ուղարկման ամսաթիվը:

7. Տեղեկությունների տրամադրումն իրականացվում է սույն Կարգի 6-րդ կետում նշված հարցումն ստանալու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում, սույն Կարգի 5-րդ կետի «գ» ենթակետին համապատասխան տեղեկությունների տրամադրումը՝ նշված հարցումն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Այն դեպքում, երբ հարցվող տեղեկությունները դասվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանափակ տարածման (հասանելիության) տեղեկություններին, անդամ պետությունների լիազորված մարմինները կազմակերպում են այդ տեղեկությունների տրամադրումը՝ իրենց անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Սահմանափակ տարածման (հասանելիության) տեղեկությունների ցանկը հրապարակվում է Ինտերնետ ցանցում անդամ պետության լիազորված մարմնի տեղեկատվական պորտալում՝ իր պետության օրենսդրությանը համապատասխան:

9. Անդամ պետությունների լիազորված մարմիններն ապահովում են ամբողջական եւ հավաստի տեղեկությունների տրամադրումը:

10. Հանձնաժողովն իրավունք ունի անդամ պետությունների լիազորված մարմիններից տեղեկություններ պահանջելու Միության իրավունքով նախատեսված լիազորություններն իրականացնելու նպատակներով:

11. Անդամ պետություններն իրականացնում են տեղեկությունների փոխադարձ տրամադրման ընթացքում առաջացող վիճելի հարցերի կարգավորում փոխադարձ խորհրդակցությունների անցկացման միջոցով:

12. Տրամադրվող տեղեկություններ են համարվում՝

ա) անդամ պետության նորմատիվ իրավական ակտերի եւ նորմատիվ փաստաթղթերի, չափումների միասնականության ապահովման ոլորտում միջազգային փաստաթղթերի վավերապայմաններն ու պաշտոնական հրապարակման աղբյուրները.

բ) անդամ պետությունների՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում միջազգային պայմանագրերի վավերապայմաններն ու պաշտոնական հրապարակման աղբյուրները.

գ) մեծությունների միավորների չափանմուշների եւ մեծությունների սանդղակների մասին տեղեկություններ՝

մեծության միավորի չափանմուշի (այսուհետ՝ չափանմուշ) կամ մեծության սանդղակի անվանումը.

ստուգաչափման (հիերարխիկ) սխեմայով չափանմուշի կարգավիճակը, տարակարգը (առկայության դեպքում).

չափանմուշի չափագիտական բնութագրերը.

չափանմուշի գրանցման համարը (առկայության դեպքում).

չափանմուշի հաստատման տարին (առկայության դեպքում).

չափանմուշի պահման եւ կիրառման վայրը (տեղեկություններ չափանմուշի տիրապետողի մասին՝ իրավաբանական անձի անվանումը կամ ազգանունը, անունն ու հայրանունը (առկայության դեպքում)՝ որպէս անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար, գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական անձի հասցեն) կամ բնակության վայրը՝ որպէս անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար, հեռախոսահամարը եւ ֆաքսի համարը, ինչպէս նաեւ էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)):

չափանմուշի չափագիտական հետեւելիության մասին տեղեկություններ.

դ) հաստատված տեսակների չափման միջոցների եւ չափման միջոցների տեսակի հաստատման մասին տրամադրված սերտիֆիկատների մասին տեղեկություններ, այդ թվում՝ չափման միջոցների տեսակի հաստատման կարգով եւ Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններով նախատեսված տեղեկություններ՝

չափման միջոցների տեսակի անվանումը.

չափման միջոցների տեսակի հաստատման սերտիֆիկատի գրանցման համարը եւ դրա տրամադրման ամսաթիվը.

չափման միջոցների տեսակի հաստատման սերտիֆիկատի գործողության ժամկետը.

չափման միջոցներ պատրաստողի մասին տեղեկություններ՝ իրավաբանական անձի անվանումը կամ ազգանունը, անունն ու հայրանունը (առկայության դեպքում)՝ որպէս անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար, գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական անձի հասցեն) կամ բնակության վայրը՝ որպէս անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար.

չափման միջոցների ստուգաչափումների միջակայքը.

չափման միջոցների ստուգաչափման մեթոդիկան, որը մշակվել է և հաստատվել է չափումների միասնականության ապահովման ոլորտում անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, կամ միջպետական ստանդարտը, որով սահմանվում է չափման միջոցների ստուգաչափման մեթոդիկան.

տեղեկություններ անդամ պետությունների կողմից չափման միջոցների տեսակի հաստատումը ճանաչելու մասին.

չափման միջոցների տեսակի հաստատման սերտիֆիկատի կամ դրա կրկնօրինակի պատճենը (առկայության դեպքում).

չափման միջոցների տեսակի նկարագրի պատճենը.

ե) հաստատված տեսակների ստանդարտ նմուշների է և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման մասին տրամադրված սերտիֆիկատների մասին տեղեկություններ, այդ թվում՝ ստանդարտ նմուշի տեսակի հաստատման կարգով է և Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններով նախատեսված տեղեկություններ՝

ստանդարտ նմուշի տեսակի անվանումը.

ստանդարտ նմուշի տեսակի հաստատման սերտիֆիկատի գրանցման համարը է և դրա տրամադրման ամսաթիվը.

ստանդարտ նմուշի տեսակի հաստատման սերտիֆիկատի գործողության ժամկետը.

ստանդարտ նմուշ պատրաստողի մասին տեղեկություններ՝ իրավաբանական անձի անվանումը կամ ազգանունը, անունն ու հայրանունը (առկայության դեպքում)՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար, գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական անձի հասցեն) կամ բնակության վայրը՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար.

տեղեկություններ անդամ պետությունների կողմից ստանդարտ նմուշի տեսակի հաստատումը ճանաչելու մասին.

ստանդարտ նմուշի տեսակի հաստատման սերտիֆիկատի կամ դրա կրկնօրինակի պատճենը (առկայության դեպքում).

ստանդարտ նմուշի տեսակի նկարագրի պատճենը.

զ) հաստատված տեսակների չափման միջոցների ստուգաչափման արդյունքների մասին տեղեկություններ, այդ թվում՝ ստուգաչափման կազմակերպման կարգով եւ Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններով նախատեսված տեղեկություններ՝

չափման միջոցների տեսակի անվանումը.

չափման միջոցի գործարանային համարը.

չափման միջոցի ստուգաչափումն անցկացրած կազմակերպության լրիվ անվանումը.

չափման միջոցի ստուգաչափումն անցկացրած կազմակերպության լիազորությունները հաստատող փաստաթղթի անվանումը եւ համարը.

ստուգաչափման նշանի (ստուգաչափական դրոշմի դրոշմվածքի) պատկերը կամ ստուգաչափման նշանի համարը սոսնձված պիտակի տեսքով.

չափման միջոցի ստուգաչափման մասին վկայականի համարը եւ գործողության ժամկետը.

չափման միջոցի ստուգաչափման մեթոդիկայի անվանումը, նշագրումը կամ նորմատիվ փաստաթղթի անվանումը, որոնց համապատասխան իրականացվել է չափման միջոցի ստուգաչափումը.

հաստատված տեսակի չափման միջոցի ստուգաչափումն անդամ պետությունների կողմից ճանաչելու մասին տեղեկություններ.

ե) չափումների վկայագրված մեթոդիկաների (մեթոդների) մասին, այդ թվում՝ որպես չափումների հղումային մեթոդիկաներ (մեթոդներ) ընդունվող չափումների մեթոդիկաների (մեթոդների) մասին տեղեկություններ՝ ներառյալ չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման կարգով կամ որպես չափումների հղումային մեթոդիկա (մեթոդ) ընդունվող չափումների մեթոդիկայի (մեթոդի) վկայագրման կարգով եւ Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններով նախատեսված տեղեկությունները՝

չափումների մեթոդիկան (մեթոդը) (այսուհետ՝ մեթոդիկա) կանոնակարգող փաստաթղթի անվանումը եւ նշագրումը, մեթոդիկայի տեքստը՝ բացառությամբ սույն Կարգի 8-րդ կետով նախատեսված դեպքի.

չափվող մեծության եւ մեծության սանդղակի (չափումների սանդղակի կամ չափումների միավորի) անվանումը.

չափումների տիրույթը.

չափումների ճշգրտության ցուցանիշները.

մեթոդիկայի վկայագրման անցկացման արդյունքներով տրամադրված վկայականի համարը եւ տրամադրման ամսաթիվը.

մեթոդիկան մշակողի (տիրապետողի) մասին տեղեկություններ՝ իրավաբանական անձի անվանումը կամ ազգանունը, անունն ու հայրանունը (առկայության դեպքում)՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար, գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական անձի հասցեն) կամ բնակության վայրը՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար.

մեթոդիկայի վկայագրումն անցկացրած կազմակերպության անվանումը, գտնվելու վայրի հասցեն.

մեթոդիկայի վկայագրումն անցկացրած կազմակերպության լիազորությունները հաստատող փաստաթղթի անվանումը եւ համարը.

մեթոդիկան որպես հղումային մեթոդիկա հաստատած կազմակերպության անվանումը.

անդամ պետությունների կողմից մեթոդիկայի վկայագրման արդյունքների ճանաչման մասին տեղեկություններ.

մեթոդիկայի վկայագրման անցկացման արդյունքներով տրամադրված վկայականի եւ (կամ) դրա կրկնօրինակի պատճենները (առկայության դեպքում).

ը) ֆիզիկական հաստատունների եւ նյութերի ու նյութեղենի հասկությունների մասին ստանդարտ տեղեկատու տվյալների աղյուսակների մասին տեղեկություններ (այսուհետ համապատասխանաբար՝ տվյալներ, աղյուսակ) (առկայության դեպքում)

աղյուսակի անվանումը եւ գրանցման համարը.

տվյալների հակիրճ նկարագիրը՝ ներառյալ պարամետրերի միջակայքերը, սխալանքը եւ կիրառման ոլորտը.

աղյուսակը մշակող կազմակերպության մասին տեղեկություններ՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական անձի հասցեն), հեռախոսահամարը եւ ֆաքսի համարը, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում).

Ինտերնետ ցանցում աղյուսակը մշակող կազմակերպության տեղեկատվական պորտալում աղյուսակի տեղադրման եւ դրա հրապարակման մասին տեղեկատվություն:
